Արձանագրություն 9

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.09.2019թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովը նախագահող՝

Կարեն Խաչատրյան - Տնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Հանձնաժողովի անդամներ՝

Արեգ Գևորգյան - Անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/ԳԱ)

Հայկ Գրիգորյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային գլխավոր ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Կարեն Բարիկյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում է հանձնաժողովի նախագահ՝ անվտանգության ապահովման բաժնի պետ Արտակ Եփրեմյանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի առաջին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի նիստը նախագահում է տնտեսական բաժնի պետ Կարեն Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման նիստի մասին

Հիմք ընդունելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան ՀՀ ոստիկանության տրամադրած պարզաբանումը.

1. ***Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.***

1.1 «ՅՈՒՆԻԳԱՐԴ ՊՐՈՏԵԿՏԻՎ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

1.2 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պահունի» ՍՊԸ-ին:

1.3 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել և «Պահունի» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր) և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

1.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն արձանագրության 1.3 կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան սույն թվականի սեպտեմբերի 20-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովը նախագահող՝ Կարեն Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

Արեգ Գևորգյան

Հայկ Գրիգորյան

Կարեն Բարիկյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան